



# St. Mary's Armenian Apostolic Church of Washington, D. C.

42ND AND FESSENDEN STREETS, N. W. (AT WISCONSIN AVE.), WASHINGTON, D. C. 20016

Pastor

PHONE: EM. 3-1923  
BISHOP PAPKEN VARJABEDIAN

1969 ՏԱՐԻՈՅ ՀՈՎՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ, ՈՒԱՄԻՆԿԹՐՆԻ  
Ս.ԱՍՏՈՒԱՍՄԻՆ ՀԱՅՑ.ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հրիւ տարի մը անցած է այն օրէն, երբ այս Ս.Եկեղեցւոյ Հոգեւոր Հիվիւի պաշտօնին կոչուեցայ 1969 տարւոյ Ս.Մննդեան տօնին առիթով:

Աստուծոյ ողորմութեամբ միասին գործեցինք ամբողջ տարի մը մեր Եկեղեց -  
ւոյ պայծառութեան եւ մեր հաւատացեալ ժողովուրդի հոգեւոր կեանքի յառաջդի -  
մութեան համար:

Հոգեւոր Հիվիւի մը գործունէութիւնը Մուխէն ներս ունի զանազան երեսներ  
զանոնք կրնանք բաժնել հետեւեալ գլուխներու տակ:

ա - Հոգեւոր եկեղեցական կեանք որ կը մատակարարուի Ս.Պատարագի մատուց -  
մամբ, բանին կենաց քարոզութեամբ, խորհրդակատարութիւններով եւ եկեղեցական  
արարողութիւններու կատարմամբ:

Ամէն կիրակի կանոնաւորաբար Ս.Պատարագ մատուցուած է եւ քարոզած  
ենք եկեղեցւոյ մէջ: Ունեցած ենք հետեւեալ խորհրդակատարութիւնները.

Սկստութիւն 5  
Պսակ 2

Մեր համայնքէն կորսնցուցած ենք 2 անդամներ 1969 տարւոյ ընթացքին:

բ- Այցելու հոգեւորականներ: Տարւոյս ընթացքին մեր եկեղեցւոյ մէջ  
պատարագած եւ քարոզած են Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը, Գերշ.Տ.Թորգոմ  
Արք.Մանուկեան, Հոգեշնորհ Տ.Վազգէն Վարդապետ Քէշիշեան, եւ Տ.Փառէն Վրդ.Աւե -  
տիքեան, որ մեր Ս.Էջմիածին ուղեւորութեան առիթով այցելեց, նաեւ Արժ.Գէնըն  
Քէնէթ Շարփ եւ Արժ.Տէր Գրիգորիէ, մին Շպիտկոպոսական եկեղեցւոյ, միւսը Ռուս  
Ուղղափառ եկեղեցւոյ հոգեւորականներ էին:

գ- Եկեղեցական կազմակերպութեանց ժողովներու ներկայ գտնուած, նախագա -  
հած, եւ այդ հանգամանքով ուղղութիւն տուած ենք մեր եկեղեցւոյ ժողովական գոր -  
ծունէութեանց: Այսպէս 1969 տարւոյ ընթացքին գումարուած են 26 Ծխական Խոր -  
հուրդի ժողովներ: 25 նիստեր Տիկնանց Միութեան վարչական կազմի եւ անդամական  
ժողովներու: Նոյնպէս նախագահած ենք Դպրաց դասու, Կիրակնօրեայ Դպրոցի, Երիտա -  
սարդաց հերթական ու բացառիկ ժողովներուն:

Ծխական Խորհուրդի եւ Տիկնանց Վարչութեան անդամներու գովելի գոր -  
ծունէութեան մասին մասնաւոր գնահատութիւնս կուզեմ յայտնել իրենց արդիւ -  
նաւոր ու ժրջան աշխատանքներուն համար, որոնց մանրամասն արդիւնքը կերելի  
իւրաքանչիւրին մատուցած տեղեկագրերուն մէջ:

դ- Մուխին ծանօթանալու համար կատարած ենք կանոնաւոր այցելութիւն -  
ներ, նախ բոլոր անդամներուն, ապա համայնքին այն ընտանիքներուն որոնք կեր -  
պով մը կապուած են մեր եկեղեցիին: Մուխի մը համար կարեւոր է ունենալ  
իր ընտանիքներու արձանագրութիւնները. կանոնաւոր ու սիստեմադիկ կերպով

այժմ ունինք մանրամասնեալ արձանագրութիւնները մեր համայնքի բոլոր ըն- տանիքներուն: Այդ արձանագրութեանց հիման վրայ բոլորին ամուսնութեանց տարեդարձներուն առիթով շնորհաւորական նամակներ ղրկած ենք. իսկ ինչ կը վերաբերի մանուկներու եւ պատանիներու, անոնց բոլորին ծննդեան տարեդարձ- ներուն առիթով բոլորին շնորհաւորական գարտեր ղրկած ենք: Ընդամենը 124 շնորհաւորագրեր:

Տուններու այցելութեանց հետ, մեր մասնաւոր խնամքին առարկան ըրած ենք հիւանդաց այցելութիւնները: Խղճի հանդարտութեամբ կրնանք ըսել, որ մեր անդամներուն եւ այլոց անխափան հիւանդանոց այցելած ենք աղօթքի գարտեր ղրկած ենք մեր հիւանդները մխիթարելու եւ զօրացնելու համար:

Իբրեւ նորութիւն մեր Ծուխին մէջ քանիցս կազմակերպած ենք տուններու մէջ ասուլիսներ եկեղեցագիտական, պատմական Ս. Գրային նիւթերու մասին: Նաեւ Համբարձման տօնին առիթով "ՎիճԱԿ"ի ձեռնարկը Ծուխին համար նորութիւն էր:

1969-ի մարտ 9-ը կիրակի կէսօրէ ետք Պալթիմորի մեր փոքրիկ համայն- քին համար կազմակերպման օր մը եղաւ, որու ընթացքին խօսեցանք եւ այդ առի- թով ցոյց տուինք եկեղեցական նկար մը, Ս. էջմիածնէն բերուած:

Մայրերու Օրուան առիթով նեշընըլ Գըթիտորըլի Պատարագը, եւ Ոտնլուայի փառաւոր արարողութիւնը մեզ մօտէն ծանօթացուց եւ յարգանք ներշնչեց օտար եկեղեցիներու անդամներուն եւ եկեղեցականներուն: Անցեալ տարուոյ Յուլիսին անդամակցեցանք Ուաշինկթընի նեշընըլ Գառնսըլ ավ Զըրչըզի կազմակերպութեան: Հրաւիրուած ենք մասնակցելու նաեւ մեզի դրացի 7 եկեղեցիներու խորհուրդին: Անոնք Զէվի Զէյսի հետեւեալ եկեղեցիներն են: ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ամենայն Սրբոց Եկեղեցին, Երկու Մեթոտական, ՄԿԻՏԶԱԿԱՆ, Երիցական, ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿ եւ ԼՈՒՏԵՐԱԿԱՆ եկեղեցիները, որոնց ընկերային գործունէութեան կը մասնակցինք:

Կրկնութենէ խուսափելու համար այս տեղեկագրին մէջ զեղջած ենք յիշա- տակութիւնը այն գործունէութիւններուն, որոնց մասնակցած ենք եւ որոնք մեր - միւս եկեղեցական կազմակերպութիւնները պիտի տեղեկագրեն:

Մեր պաշտօնին բերումով անցեալ Հոկտեմբեր ամսուն մասնակցեցանք Ս. էջմիածնում գումարուած Եպիսկոպոսաց ժողովին, եւ այդ առիթով պէտք եղած կարգադրութիւնները ըրինք որպէսզի այցելու հոգեւորականներ ունենանք:

Հովուական մեր պաշտօնին հետ ձեռնարկեցինք նաեւ "Առաջնորդի Պատգա- մաւորի" միւս պաշտօնին, կատարելով պարտականութիւնները իբրեւ ներկայացու- ցիչը Հայ Եկեղեցւոյ, մայրաքաղաքիս մէջ: Համապատասխան ժողով մը կազմուեցաւ բաղկացած հետեւեալ յարգելի ազգայիններէ. Տօթթ. Ա. Աւագեան Ատենապետ, Տիար Գ. Գասպարեան Ատենադպիր, Տիար Ա. Պօտուրեան Գանձապահ, եւ Գնդ. Ճ. Ճսգալեան խոր - հրդական:

Կարելոր կը նկատեմ մեր կատարած գործերուն ամփոփ տեղեկութիւնները տելէ ետք հակիրճ կերպով թուել մանաւանդ մեր ապագայի ծրագիրները:

- Ա- ԱՊԱՀՈՎԵԼ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՊԱԳԱՆ: 1-Քաղաքէն դուրս հող մը գտնելու եւ գնելու համար ծրագիր մշակել: Այս ժողովը արդէն ունի սեղանի վրայ այդ մասին հարց մը: 2- Այդ նպատակին համար անձեռնմխելի գումար մը հաստա - տել. ապահովելով եկամուտներ ու կտակներ:
- Բ- ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵՁԱՐԴՈՒԹԻՒՆ. փոփոխութիւններ կատարել այդ նպատակաւ եկեղեց - ւոյ մէջ: Նախապէս այս մասին մանրամասնութիւններ տուած եմ:
- Գ- Ուաշինկթըն նոր հաստատուող եւ եկեղեցւոյ չը պատկանող ընտանիքները կա - պել մեր եկեղեցւոյ ծրագրուած աշխատանք կատարելով:
- Դ- ԵՐԱԳԻՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԳԵՄԲԻ մը մասին էզպրի Բարքի մէջ:

Համագործակցութեան, սիրոյ, յաջողութեան լաւագոյն մաղթանքներ բոլորիս յա - ռաջիկայ տարեշրջանի համար. եւ հայցելով Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականու - թիւնը բոլորիդ վրայ:

Սիրոյ ողջունել եւ Օրհնութեամբ  
Բարգէն Եպիսկ. ՎԱՐԾԱՊԵՏԵԱՆ, Հոգ. Հովիւ